ղացին ասում է «ոսկի մատանի», «արծաթ գոտի»:

Ուրեմն Լ. Գրէյի առաջարկածը լեզուական աղճատում է:

Յետոյ՝ ի՞նչ հիմքով «հերը» որոշ է, իսկ «մօրուսն» անորոշ. ինչո՞ւ Վահագն «զհեր հրոյ» ունէր, բայց «մօրուս բոցոյ» եւ ոչ «զմօրուս բոցոյ»:

Եւ վերջապէս «հեր հրոյ» եւ «մօրուս բոցոյ», չի նշանակում «հուր հեր» եւ «բոց մօրուս», այլ մի հեր, որ հուրինն է եւ մի մօրուս, որ բոցինն է. իսկ ո՞ւր մնաց հապա Վահագնի սեփական մազն ու մօրուքը...

Հետեւեալ երկու յաւելումները վերաբերում են Գ. Մագիստրոսի պահած հատուածին, որի վերջին տողն ասում է.

Մեք փող հարուաք եւ թմբկի հարկանէաք

Հեղինակն առաջարկում է այսպէս տրոհել ու կարդալ.

Մեզ որըք փող հարուաք եւ
զըթըմբըկի հարկանէաք

Բայց ինչո՞ւ «մեք»ը դարձած է «մեզ» եւ աւելցած է «որք» դերանունը «որըք» ձեւով: Նախ՝ զուգաթեւ վանկեր ստանալու համար: Ապա վարի տողը, որ նրան թւում է անկապ՝ վերի բացականչութեանը կցելու համար: Նա կարծում է, որ մահամերձ Թագաւորն ասում է.

«Ո՛վ կը տար մի Նաւասարդի առաւօտ մեզ, որ փող էինք փչում եւ թմբուկ զարկում»: Մինչդեռ «Ո՛ տայր» խօսքն ունի իր խնդիրը, որ է «ինձ» — «Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի»... Թագաւորն ասում է, «Ո՛վ կը տար ինձ ծխանի ծուխն ու Նաւասարդի առաւօտը, եղների վազելն ու եղջերուների արշաւը»: Եւ յետոյ յիշում է որսական մի տեսարան. «Մենք փող էինք փչում եւ թմբուկ զարկում»: Իր ուզածը ծխանի ծուխն է, Նաւասարդի առաւօտը եւ եղնիկների վազքը. եւ այդ ուզում է ո՛չ նրա համար, որ իրանք փող էին փչում եւ թմբուկ զարկում, այլ որովհետեւ այն ժամանակ առողջ էր եւ ոչ մահամերձ հիւանդ: Նա իր առողջ տարիներն է ուզում, որ յետ գան եւ իր սիրելի որսական հանդէսները Նոր Տարուան:

Լ. Գրէյի առաջարկած ուղղումը ոչ միայն դասական չէ, ոչ միայն գրաբար չէ, այլ մինչեւ իսկ հայերէն չէ: Հայերէն ո՞վ է տեսած կամ լսած «որ» դերանուան այս տեսակ գործածութիւն:

Աշխարհաբարն ասում է. «Ո՞վ հանդիստ կը տայ մեզ, որ տառապեցինք»: Գրաբարն ասում է. «Բա՛ց մեզ Տէր, զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ». եւ ոչ թէ «ո՛վ կը տայ մեզ, որոնք.. կամ՝ «բաց մեզ, որք...

(Վերջը յաջորդով)

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՅՈՒՇԵՐԻՑ

Գրեց՝ ՌՈՒԲԷՆ ԽԱՆ-ԱԶԱՏ

Դ. ԳԼՈՒԽ

ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԵՑ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ասացի, որ Փորթուգալեանի հետ մեր յարաբերութիւնը խզուելուց յետոյ, սկսեցինք մտածել՝ մեր սեփական տպարանն ու թերթն ունենալ: Դա ի հարկէ, այնքան էլ հեշտ չէր կիսաքաղց ուսանողների համար:

Մեր խմբից ամենաապահովներն էին Նազարբէկեանը, օր. Վարդանեանը եւ Ք. Օհանեանը. իսկ միւս երեքս՝ Կաֆեան, Ղարաջեան եւ ես անապահով ուսանողներ էինք:

Կաֆեանը, ճիշդ է, հարուստ վաճառական եղբայրներ ունէր Թիֆլիսում եւ Բաքւում, բայց նրանցից ոչ մի կոպէկ չէր ստանում: Դեռ եւս Թիֆլիսի ռէալական դպրոցի չորրորդ դասարանից եղբայրները ցանկացել էին նրան ուսումից զրկել եւ իրանց առեւտրական գործի մէջ դնել. իսկ նա փախել էր, նախ ընկերների օգնութեամբ Թիֆլիսում էր անկախ ապրել ու սովորել մինչեւ 6-րդ դասարանն ու ապա եկել